

ՄՏԱՎՈՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԳՅՈՒՂԱՑԻՈՒԹՅԱՆ
ՓՈԽՀԱՐԱՐԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՐՏԱՑՈՒՄԸ
ՅԱՔՈՒՓ ՔԱՂԻԻ «ՕՏԱՐԸ» ՎԵՊՈՒՄ

Թուրք գրող Յաքուփ Քաղրիի արդեն իսկ 30-ական թթ. ստեղծագործությունները վկայում են նրա գրողական բարձր վարպետության մասին: Հեղինակն իր գրվածքներում ձգտում էր ռեալիստորեն անդրադառնալ արդիական թեմաներին, սակայն այս շրջանի ստեղծագործություններում ակնառու են դառնում գյաղի գաղափարական հակասությունները, երկվածությունն իրականության գեաեատականներում: Մա հատկապես զգալի է գյուղացիական խնդիրների մեկնաբանություններում: Գյուղացիության սոցիալական, քաղաքական և մշակութային խորը ճգնաժամը չլուծվեց նաև քեմալիզմի հաղթանակից հետո: Ի տարբերություն «դեմոկրատական ուղղությանը» հարող գրողների՝ Քաղրիի այն թուրք մտավորականներից էր, ովքեր շարունակում էին հավատալ քեմալիզմի դրույթներին, և իրականության անկատարությունն արդարացնում էին բարեփոխումների անցկացման հապաղումով, ինչպես նաև մտավորականների անտարբեայությամբ:

«Օտարը» («Yaban», 1932)¹ վեպը Քաղրիի ամենից հայտնի և ամենից շատ ընթերցված ստեղծագործությունն է, որը մեծ հեղինակություն ու ճանաչում է բերում գրողին: Այն գրողի հինգերորդ վեպն է, որն ինչպես իր հրատարակության ժամանակ՝ 1932թ., այնպես էլ հետագայում՝ թե՛ իր բովանդակությամբ, և թե՛ մատուցման ձևի պատճառով բավականին բուռն քննարկումների առարկա է դարձել²: Դեռևս «Օտարը» վեպը գրելուց տասը տարի առաջ, Քաղրիի իր «Թշնամու այրած քնակավայրերը» «*Barbarların*

¹ Y. K. Karaoğlu, *Yaban*, İletişim Yayıncılık, İstanbul, 1932, տե՛ս նույնի İletişim Yayıncılık, 1948, 1970, 1990, 2005 հրատարակությունները:

² Հալիլե Էդիպ Ադըվարը մի առիթով գրում է, որ ցանկացել է այդ վերնագրով մի վեպ էլ ինքը գրել, և քանի որ արդեն այդ անունով վեպ կար, նա հրաժարվել է այդ մտքից՝ իր վեպը վերնագրելով «Կրակե վերնաշապիկ» (Տե՛ս C. Kudret, *Türk Edebiyatında Hikâye ve Roman*, Cilt 2, İstanbul: İnkilâp Yayınevi, 1988, s. 1535):

Yakıcı Köyler Ahalisine՝ վերնագրով հռչակածում անդրադարձել էր թուրք գյուղացու և մտավորականի միջե եեռավոր շփման և մտավորականի կողմից գյուղացուն մոռացության մատնելու խնդրին: Այստեղ Քադրին գրում է. «Իրականում երջանիկ սոված էին, քանի որ կշտանալու էին: Երջանիկ մերկ էին, քանի որ հագնվելու էին: Աղետներ տեսան, բայց երջանիկ էին, քանի որ արդարության էին հասնելու»³: Սակայն նման արտահայտություններ անող և «Օտարը» վեպի հեղինակ Յակուփ Քադրին նույնը չէր այլևս: Այս վեպը գրելիս նա 1932թ. «Քադրո»⁴

³ Niyazi Akı, *Yakup Kadri Karaosmanoğlu, İnsan-Eser-Fikir-Ölüm*, İstanbul, İletişim, 2001. s. 11-12.

⁴ Թուրքայիում ամենից հանրածանոթ «Քադրո» ամսագիրն արմատական ազդեցություն ունեցող թուրքական ինտելեկտուալ շարժումներից մեկն է համարվել: Ամսագիրը կարևորում է հրապարակում էր Թուրքիայի Հանրապետության կայացմանը նպաստող ցանկացած հռչակած: Ամսագիրը, որի գաղափարական կողմը խիստ արտահայտված էր, միաժամանակ դարձավ մտավորականների յուրօրինակ մի շարժման հենարան: 1932-ից 1935 թթ-ի ընթացքում հրապարակվել է 36 համար: Ամսագրի գաղափարախոսը Շելքեթ Այուրեյյա Այդեմիրն էր, իսկ մենաշնորհը պատկանում էր Յաքուփ Քադրիին, հրատարակչական տնօրենը Վեդաթ Նեդիմ Թորն էր: Իսկ Իսմայիլ Հյուսրն Թոքին և Բուրխան Ասաֆ Բելգեն հիմնադիր գրողներն էին: Շելքեթ Այուրեյյան 1931թ. հունվարի 15-ին «Թուրք օջախների» Անկարայի գլխավոր կենտրոնում «Հեղափոխություն և Քադրո» վերնագրով մի դասախոսություն է կարդում, որին մասնակցում էին թե՛ «Թուրք օջախները», և թե՛ ժողովրդահանրապետական կուսակցության (CHP) լիազոր ներկայացուցիչները: Այս դասախոսությունը հետաքրքրությամբ ընդունվեց թե՛ «Թուրք օջախների» ներկայացուցիչների, և թե՛ որոշ քաղաքական անձանց կողմից: Հետագայում դասախոսության տեքստը բազմացվեց և ներկայացվեց պետության լիազոր կառույցներում եղած պաշտոնյաների կարծիքին: Շուտով Յաքուփ Քադրին որպես այս գործընթացի շարունակություն առաջարկում է ստեղծել ամսագիր. «Ես պատգամավորներին և ժողովրդին ժողովրդական կուսակցության սկզբունքները բացատրելու համար մի ամսագիր եմ լույս ընծայել ցանկանում»: Քադրին այդ մասին տեղեկացնում է Մուստաֆա Քեմալին և ստանալով թույլտվություն՝ սկսում է այն հրատարակել: Այս ամսագրի հրատարակման առիթով Քեմալ Աթաթուրքն ասել է, որ ամսագրի նպատակը յուրահատուկ ձևով և մեթոդով թուրք ազգի և երկրի կառուցմանն ու առաջադիմությանը ծառայելն է: Ամսագրում հիմնականում լույս էին տեսնում այնպիսի հռչակածներ, որոնք քարոզում էին Քեմալի առաջ քաշած այն հայտնի վեց դրույթները, մասնավորապես՝ հռչակածներում լուսաբանում է էթաթիզմը: Յաքուփ Քադրի Քարաօսմանողլուի քաղաքական գաղափարների մասին մանրամասն տե՛ս Sedat Palut (Konuk), *"Kadro dergisi" (1) - Derginin ekonomiye bakışı*, *"Toplum ve Politika Enstitüsü"*, Şah, 16 Mart, 2010. Fatih Demirci, *Kadro Hareketi ve Kadrocular*, Dumlupınar Üniv. Sosyal Bilimler Dergisi, sayı 15, 2006. Alparslan Aslan, *Birikim Dergisi*, Güncel Makaleler, 21. 07. 2008. Lutfi Sunar, *Kadro Dergisi/Hareketi ve*

ամսագրի անդամ Յակուբ Քադրին էր, որի գաղափարները ժամանակի ընթացքում կտրուկ շրջադարձ էին ապրել: Հատկապես քաղաքական գաղափարներն առավել վառ արտահայտվում են նրա «Օտարը» և «Անկարա» վեպերում:

Նրա վերառնշյալ հոդվածը դարձավ «Օտարը» վեպի հիմքը: Քադրին իր հոդվածում առաջ քաշած խնդիրներն ավելի ընդլայնեց, զարգացրեց և դարձրեց գրական թեմա: Վեպի առանցքը կազմում է մտավորական-գյուղացի հակասությունը: Վեպում բարձրացրած խիստ արդիական և հրատապ խնդիրների համար այն թուրք գրականագետներն արժնորել են որպես «գրական գոհար»⁵:

1921թ. Արևմտյան ճակատի հրամանատարության հրահանգով «Բռնությունների ուսումնասիրման հանձնաժողովի» (Tetkik-i Mezalim Heyeti) պատվիրակության կազմում Քադրին այցելում է երկրի տարբեր շրջանները, Սաքարիայի պատերազմից⁶ հետո անձամբ շրջում տարբեր գյուղերում, իր տեսածն ու զգացածը, պատերազմի ծանր հետևանքները, որի անմիջական կրողը, ըստ նրա, թուրք գյուղացին էր (որն է խոսք չի ասվում ոչ թուրք գյուղացիության անասելի տառապանքների ու գրկանքների մասին), գրառել և գեղարվեստորեն արտացոլել է իր «Օտարը» վեպում:

Այս ստեղծագործությունն ունի դասական վեպին բնորոշ հատկանիշներ և կառուցվածք: Վեպի դիպաշարը (սյուժեն) ժամանակային առումով ընդգրկում է առաջին համաշխարհային պատերազմը, Սաքարիայի հաղթանակը, քեմալական շարժման տարիները, իսկ դեպքերը զարգանում են Անատոլիայի (նկատի

Etkileri, Türk Araştırmaları Literatür Derg. Cilt 2, Sayı 1, Sh 511. Ayhan Orhan, *Tek Partili Yılların Ekonomi Politikası ve Kadro Hareketi*, Kocaeli Üniv. Sosy. Bilimler Ens. Sayı 17 (2009). Nevin Coşar, *Kriz, Savaş ve Bütçe*, (1926- 1950), Bağlam Yay. 2004, sayfa 29

⁵ Ali Serdar, *Yakup Kadri Karaosmanoğlu'nun Romanlarında cinsellik*, Ankara, 2002, s. 72.

⁶ Հունաստանի իր կորցրած տարածքներն ազատագրելու նպատակով Անգլիայի աջակցությամբ 1921թ. նոր հարձակում ձեռնարկեց թուրքական ուժերի դեմ և արդեն մոտեցել էին ընդհուպ Անկարային: 1921թ. օգոստոսի 23-ին Սաքարիա գետի վրա սկսվում է վճռական ճակատամարտ և տևում մինչև սեպտեմբերի 13-ը, այն ավարտվեց թուրքերի հաղթանակով: Թուրքական կողմից ռազմական գործողությունները դեկավարում էր ինքն անձամբ Սուստաֆա Քեմալը, որն այս հաղթանակի համար ԹԱՄԺ-ը նրան շնորհեց մարշալի աստիճան և «Դազի» («Հաղթող») տիտղոսը (Տե՛ս Մ. Ա. Հասրաթյան, Մ. Ֆ. Օրեշկովա, Յու. Ա. Պետրոսյան, *Թուրքիայի պատմության ուղիվագծեր*, էջ 241-242):

ունի Փոքր Ասիան) Փորսուկ գետի ափին գտնվող փոքրիկ մի գյուղում: Հեղինակի նկարագրմամբ՝ գյուղը ծայրաստիճան անտեր, մոռացված մի փլատակ էր հիշեցնում: Ըստ գեղարվեստական հնարանքի՝ քեմալական շարժման հաղթանակից հետո, Հայմանայի հովտում՝ Փորսուկի դաշտին ափամերձ մի գյուղի ավերակների միջից, հեղինակը հայտնաբերում է թուրքական բանակի սպա, վեպի գլխավոր հերոս՝ Ահմեդ Ջելալի պատառոտված հուշատետրը՝ ծայրերն ամբողջովին այրված վիճակում, որի գրառումներն էլ դառնում են վեպի դիպաշարը: *«Արևմտյան ռազմաճակատ ուղարկված հետազոտությունների պատվիրակության կազմում ավերակների միջից, քարերի տակից, մոխրացած մարդկային ոսկորների մեջ, ծայրերն այրված հուշատետրի տեսքով այս գրվածքը գտա՛»:*

Ահմեդ Ջելալը փաշայի որդի էր, որը կրթություն էր ստացել Ստամբուլում և ուներ քաղաքային դաստիարակություն: Որպես պահեստային սպա՝ մասնակցել էր առաջին համաշխարհային պատերազմին և կորցրել մի ձեռքը: Անձնական նախաձեռնությամբ դիմում է ռազմական հանձնակատար Մեհմեդ Ալիին, որպեսզի տեղավորվի նրա գյուղը՝ Փորսուկ գետին ափամերձ: Վեպի հերոսն ապրում էր հոգևոր ճգնաժամ: Նրա «հայրենասիրական» զգացումները վիրավորել էին ծախու և անբարո մայրաքաղաքային չինովնիկները: Ահմեդ Ջելալը դեռ երեսունհինգ տարեկան չկար, սակայն իր համար ամեն ինչ արդեն ավարտված էր համայնում: Անգլիական ռազմածի վերահսկողության հետևանքով Ահմեդ Ջելալն այլևս չկարողացավ Ստամբուլ վերադառնալ և հույս ունենալով, թե հասարակ ժողովրդի մեջ կարող է գտնել գաղափարակից-համախոհների, որոշում է հաստատվել գյուղում: Մեր առջև ներկայանում է ամբողջ հետամնաց ու խավարամիտ գյուղի դեմ միանձնյա դուրս եկած մի կերպար: Չնայած նրա թափած բոլոր ջանքերին՝ այդպես էլ չի հաջողվում գյուղում գտնել ակնկալած մարդկային մտերմությունը: Եվ վեպի գլխավոր հերոսը կյանքից հիասթափություն էր ապրում. նա իրեն երբեք այդքան օտար չէր զգացել սեփական ժողովրդից, երբեք այդքան մեկուսի չէր եղել, այստեղ նա սեփական մաշկի վրա

⁷ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, İletişim Yayınları, 2008, s. 15-16.

է գգում իր և գյուղացու միջն եղած անհաղթահարելի անդունդը⁸։ Ի սկզբանե՝ Ահմեդ Ջելալը գյուղացիների հանդեպ ուներ տհաճության զգացում, որը գնալով ավելի է խորանում, և որքան էլ նա փորձում էր թաքցնել, այն չէր վրիպում գյուղացիների աչքից։

Հերոսը, որ տոգորված էր քեմալական գաղափարներով, հաստատվում է գյուղում և ամեն կերպ ձգտում է գյուղացիներին ապացուցել, որ ինքն օտար չէ, նրանք բոլորն էլ ունեն միևնույն ցավը, երազանքը, փորձում է գյուղացիներին բացատրել Մուստաֆա Քեմալի սկսած պայքարի նշանակությունն ու նպատակները, հաճախ խոսում է թուրք ժողովրդի «անկախության երազի» մասին, որի ձեռքբերումը շատ իրական և մոտ է համարում։ Սակայն նրան ոչ ոք չի նավատում, գյուղացիները մշտապես թերահավատորեն, օտարոտի լսում էին նրա քարոզները։

Գլխավոր հերոսը մտերմիկ հարաբերություններ է հաստատում միայն Մեհմեդ Ալիի հետ, որը ծառայության ընթացքում իր ենթակա զինվորներից մեկն էր, Մեհմեդի մոր՝ տիկին Ջեյների, եղբոր՝ Իսմայիլի և նրա կնոջ Էմինեի հետ։ Ահմեդը, թեև գյուղում ձեռք է բեղում բարեկամներ, սակայն մշտապես նրան ուղեկցում էր այն զգացումը, որ կա մի անանցանելի անջրպետ իր և սեփական ժողովրդի միջև։ Պարզ էր մի բան. նրան գյուղացիները վերաբերվում էին որպես օտարականի։

Մեհմեդ Ալին չնայած պաշտպանում էր Ահմեդ Ջելալին, բայց իր համագյուղացիներից շատ բանով չէր տարբերվում։ Նախկինում զինվորական Մեհմեդ Ալին, վերադառնալով գյուղ, ամբողջովին փոխվում է, և հեղինակը հանգում է այն նգրակացության, որ զինվորական դաստիարակությունը և նմանատիպ բաներն անցողիկ են, եթե մարդը տգետ է, սահմանափակ և չի ուզում աշխատել իր զարգացման վրա։ Վնայի մեկ այլ կերպար Բեքիր Չավուշը նախկինում զինվորական էր, ուստի Ահմեդ Ջելալի հետ մի վտքը ավելի մոտ էր։ Խոսակցությունների ընթացքում նրա տգիտությունն անմիջապես աչքի էր զարնում։ Իր աշխարհայացքով և մտածողությամբ համագյուղացիներից շատ չէր տարբերվում։

Վնայի ինքնատիպ հերոսներից մեկը տիկին Ջեյներն էր՝ Մեհմեդ Ալիի մայրը, որը համակերպվել էր իր ճակատագրի հետ,

⁸ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 1990, s. 36.

սպառնալից կորցրել որդիներից մեկին և ամուսնուն: Հեղինակը ստեղծել էր միայնակ տան հոգսն ուներին վերցրած, չքավորության և ցավի մեջ ապրող թուրք կնոջ կերպար⁹:

Վեպի մեկ այլ կերպար Սալիհ աղան, որ գյուղի ամենահարուստ մարդն էր, գյուղի տերն ու տիրակալն էր, իր հագուկապով մուրացկանից չէր տարբերվում: Այժմ էր ընկնում գյուղական պարզունակ խորամանկությամբ: Կեղեքում էր ողջ գյուղը և դեռ ցանկանում էր իր ձեռքն առնել տիկին Ջեյնեֆի հողակտորը¹⁰: Անձնական շահերից ելնելով՝ եա շուտով համագործակցում է թշնամու հետ և գյուղը թողնում բախտի քմահաճույքին: Շուրջ բոլորը ռազմական բախումներ, ավերակներ, սովի ու անմարդկային պայմանների մեջ հարսնված բնակիչներ: Իսկ օտար ուժերի հետ համագործակցող Սալիհ աղան և շեյխ Յուսուֆը շարունակում էին տանջել և կեղեքել գյուղացիներին¹¹:

Եթե Սալիհ աղան տնտեսապես էր կողոպտում գյուղը, ապա շեյխ Յուսուֆը, որը հոգևորականի դիմակի տակ էր թաքցնում իր իսկական էությունը, նույնն անում էր հոգեոր դաշտում: Նա գյուղացիներին կրոնական և բարոյական ճնշումների էր ենթարկում: Այս երկուսը, լինելով ծայր աստիճան տգետ, խավարամիտ և փնթի, միաժամանակ գյուղի ամենաազդեցիկ և հզոր ուժերը, վարձում էին ամեն կերպ խոչընդոտել Ահմեդ Ջելալին: Պետք է ասել, որ վեպի երկրորդական կերպարների փոքր երկխոսությունները ևս բացահայտում են առհասարակ թուրք գյուղացու մտայնությունն ու աշխարհընկալումը:

Ինչպես պարզվում է վեպից, գյուղը որոշ ժամանակ մտնում է հունական ռազմական երկրորդ միավորման վերահսկողության տակ: Հեղինակը, հույն զինվորներին վերագրելով բարբարոսի հատկանիշներ, նկարագրում է գյուղացիների նկատմամբ իբր նրանց իրականացրած բռնություններն ու կոտանքները, անասելի տանջանքները: Սակայն եա ոչանէ խոսք չի գրում, թե թուրք զինվորներն, այսպես կոչված «ազգային ազատագրական պայքարի ներքո» իրականում ինչպիսի բարբալասություններ են իրագործել ոչ թուրք ժողովուրդների նկատմամբ: Տեղին է մեջ բերել հույն

⁹ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 2008, s. 31, 37.

¹⁰ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 2008, s. 63-64.

¹¹ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 2008, s. 27-28, 48.

թուրքագետ Յ. Աքցոյլուի այն կարծիքը, որ թուրքական պատմագրությունն ամեն կերպ «փորձում է կոտորողին հավասարեցնել գոհին և հելլենականության հանդեպ կազմակերպված բռնագաղթի փաստը բացատրել որպես հունական բանակի Անատոլիայում (նկատի ունի Փոքր Ասիան) ներկայության արդյունքում, մի հանգամանք, որը զրգոեց թուրք ազգայնական շրջանակները և առաջացրեց նրանց հակազդումը»: «Փոքրասիական պատերազմի՝ Անկախության կամ Ազատագրական պատերազմի ընթացքում թուրքական ազգայնական ուժերը շարունակեցին այն գործը, որը սկսվել էր 20-րդ դարի երկրորդ տասնամյակում... Բնորոշ դեպքերից են հույն բնակիչների զանգվածային ջարդերը Այդիեի ողջ տարածքում (1919թ. հունիս), Աստակոսի ծոցի հունական, հայկական գյուղերում, ինչպես նաև Նիկևիայում և Նիկոմեդիայում (1920)»¹²:

Այստեղ կարող ենք ավելացնել, որ ոչ միայն թուրք պատմագրությունն, այլև թուրք գրականությունը, տվյալ դեպքում Յաքուփ Քադրին իր այս վեպով քողածածկելով քեմալականների իրական շովինիստական և պանթուրքական էությունը, ամեն կերպ ձգտում է շարժմանը հաղորդել վեհ, հայրենասիրական գաղափարներ:

Քադրիի մոտեցումը թե՛ գյուղին, և թե՛ գյուղացուն հակասական է: Ըստ նրա՝ այդ մարդիկ պատերազմի հետ ընդհանրապես որևէ կապ չունեն և չեն էլ ուզում ունենալ: Ի հակադրություն նրանց՝ քեմալական պայքարի վերաբերյալ միանգամայն այլ դիրքորոշում ունի գլխավոր հերոսը՝ Ահմեդ Ջելալը, նա ապրում էր քեմալական գաղափարներով, դրանք իր կյանքի միակ իդեալներն էին: Նույնիսկ պարտությունից հետո նախանջող «թշնամու գորգերի կատարած ավերածություններին» գյուղացիները որևէ հակազդեցություն ցույց չեն տալիս: Նրանք այդ փաստը կարծես

¹² Հույների և հայերի մաքրագերծումը փոքրասիական տարածքներից տեղի է ունենում մինչև 1920թ. ամռան վերջը: «Ընդհանուր սամամբ, հետևում են հետևյալ պրակտիկային. նախ և առաջ բնակչության թանկարժեք և այլ շարժական ունեցվածքային տարրերի կողմադուր, որոնք դժբախտ բնակիչները ստիպված էին հանձնել որպես փրկագին, որպեսզի մագապուրծ լինեն առավել վատ արկածներից՝ Երկրորդ վալում՝ զինված ուժերի կողմից գյուղերի շրջապատումը և ամեն կերպ նրանց ոչնչացումը» (Յ. Աքցոյլու, *Անիծված Ադունի բնաջնջումը*, էջ 102-103):

հնագանդությամբ են ընդունում: Գյուղացիների այս անտարբերությունը և ստրկական հոգեբանությունն Ահմեդին քիչ է մնում խելագարության հասցնել: Փատորեն Ահմեդի բոլոր գրույցներն ու բացատրությունները գյուղացիների հետ անցել էր ապարդյուն:

Քաղրին, իր այս վեպի գլխավոր թեմա դարձնելով տարիներով լքված գյուղացու և մտավորականի միջև եղած խորը անջրպետը, բացեիքաց ներկայացնում է, որ քաղաքից եկած լուրաքանչուր մտավորական գյուղացու համար ընկալվում է որպես օտարական: Մակայն քարանձավային պայմաններում ապրող մարդկանց միջև հայտնված Ահմեդ Ջելալին իր համար ստեղծում է պատրանք, որ մի օր ինքը կարող է ապացուցել, որ օտարական չէ: Ակնհայտ էր, սակայն, որ թուրք մտավորականը, թուրք «լուսավորիչը» թուրքական «լայնածավալ և խավար այս աշխարհում» մի օտար, միայնակ մարդ է: Ահմեդ Ջելալին թվում էր, թե վերադարձել է դեպի իր արմատները, և նա որքան խորն էր ընկղմվում գյուղացիների հետ եարաբեյություններում, այնքան ավելի է զգում, թե ինչպես է հեռանում իր արմատներից: Միայնության ցավը մեղմնլու համար ցանկանում է դեպի «իր հոտը վերադառնալ, սակայն հոտը արդեն ցրված է, նախրապանը ուղղաբերձ ժայռի բարձրունքից բարձրաձայնում է, փորձում հավաքել ցրված հոտը, բայց՝ իզուր»¹³: Շուտով Ահմեդը զգում է, որ ինքն էլ գյուղացիների պես ամեն ինչ թողնում է ճակատագրին: Հերոսի տրամաբանությունը շատ հաճախ տեղի է տալիս գյուղացիների բնագոյնին: Եվ հաճախ հերոսը կրկնում է. «Ձեզ ու վ կարող է օգնել, ձեզ համար եթե երկնքից հրեշտակներ էլ իջեցնեն, միննույն է, չեն կարող փրկել: Որովհետև ամենից առավել ձեզ պետք է ձեզանից փրկել»¹⁴:

Յակուբ Քաղրին վեպում ձգտել է համակողմանիորեն կերտել մտավորական խավի կողմից մոռացված, անտեսված գյուղացուն, ցույց տալ նրա զրկանքներն ու ծայր աստիճան աղքատությունը: Ստեղծված իրավիճակում հեղինակը բացահայտորեն մեղադրում է միմիայն մտավորականությանը և փորձում գյուղացու ողբը հասցնել թուրք մտավորականին ու վերջինիս էլ պատասխանատվության կանչել նրանց ճակատագրի համար: Յակուբ

¹³ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 1990, s. 45.

¹⁴ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 1990, s. 21, 25, 54.

Քաղրի Քարասումանօղլուն իր հռչակածներից մեկում ասում է. «Ես մաքուր, զտարյուն անատոլիացի եմ: Անատոլիայում գյուղի և ավանի, ավանի և քաղաքի միջև մեծ տարբերություն չկա»¹⁵: Մակայն «Օտար»-ը վեպում հեղինակը ներկայացնում է մտավորականության և հասարակ ժողովրդի, գյուղացու և քաղաքացու միջև եղած խորը անջրպետը: Հետաքրքրական է, որ Քաղրիի նախորդ գործերի և «Օտար»-ի գյուղացու կերպարները միմյանցից զգալիորեն տարբեր են: Մի կողմից հեղինակը նկարագրում է երկրի փոքրասիական բարեբեր հողերի վրա գյուղացու չքավոր ու անկարող վիճակը, մյուս կողմից՝ կերպավորում է պատերազմի տարիներին դաժան պայմանների դատապարտված թուրք գյուղացուն՝ որպես ժլատ, եսասեր և բացառապես զուրկ վեհ զգացումներից, որը դարձել էր «անմշակ հողերի նման անզգամ»:

Գլխավոր հերոս Ահմեդ Ջելալը ցանկանում էր միաձուլվել գյուղացիներին և այսպիսով վերագտնել իրեն. «Նրանց պես լինել, նրանց պես նստել վեր կենալ, նրանց լեզվով խոսել»: Ամեն ինչ կանեմ նրանց պես: Մակայն ինչպե՞ս մտածեմ նրանց պես»¹⁶: Նման շեշտադրությամբ հեղինակը նշում է այդ գաղափարի անհնարին լինելը: Անձի և հասարակության միջև ներդաշնակությունը միայն արտաքինապես լինել չի կարող, նրանց և՛ մտքերը, և՛ զգացումները պետք է նույնը լինեն: Հեղինակը նաև փորձում է պարզաբանել մտավորականի և գյուղացու միջև ստեղծված անդունդի պատճառները. ըստ նրա՝ դրանք գալիս են դեռևս Օսմանյան ժամանակաշրջանից, դրանք մշակութային անհամատեղելիության հետևանքով առաջացած երևույթներ են: Քարասումանօղլուն մատնանշող հակադրությունը վեպում զարգացնելով՝ կերպավորում է քեմալական գաղափարները կրող, երկրի լուսավոր ապագայի հանդեպ հավատով տոգորված մտավորականների և հավատը կորցրած խավարամիտ գյուղացիների, որոնք չէին էլ հասկանում, թե իրենք ովքեր էին: Ահմեդ Ջելալը և գյուղացիները տարբեր աշխարհների են պատկանում, նրանցից մեկը կիրթ քաղաքացի է, իսկ մյուսը անգրագետ գյուղացի: Գավառներում հասա-

¹⁵ Atilla Özkırımlı. *Yaban Üzerine*, İstanbul, 2000, s. 15-16.

¹⁶ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, s. 12.

րակ ժողովրդից շատերը դեռևս չունեին ընդգծված թուրքական ինքնության գիտակցություն, նրան մոտ գերիշխող էր իսլամական հավաքականության պատկանելու զգացումը: Թեև պատերազմում հիմնական կոմոլ ուժը կրկին գյուղացիներ էին, սակայն նրանք «ընդամենը մի հոտ էին, որ ղեկավարվում էին մտավորական սպաների կողմից»: Ահմեդ Ջելալն ասում է, որ հաղթանակը պետք է ոչ թե գյուղացիներին փրկելու, այլ հողերը պաշտպանելու համար: Եվ միայն պաշտպանված երկրում կարող է գյուղացին գտնել իր երջանկությունը¹⁷:

Քաղրին գյուղացիների չքավոր վիճակը պայմանավորում էր մտավորականների հետ ունեցած խորը անջրպետով, մյուս կողմից էլ՝ նույն գյուղացիներին մեղադրում քարացածության մեջ: Հենց այս ելակետից էլ նա կերպավորել է թուրք գյուղացուն իր «Օտարը» վեպում: Քաղրիի այս ստեղծագործությունը կարծես նրա «Սողոմ և Գոմոր» վեպի շարունակությունն է, որում նա հիմնականում բացահայտված են թուրք մտավորականի և ժողովրդի փոխհարաբերությունները:

Վեպում Քաղրին, իդեալականացնելով Քեմալ Աթաթուրքին, զարգացնում է այն միտքը, որ միայն նա և նրա հետևորդները հանձն առան «ազգի փրկության պատասխանատվությունը»: Բայց կար մի ստվար զանգված, որ չէր հավատում ո՛չ նրանց, ո՛չ էլ ազգին, նա հավատում էր միայն Ստամբուլում նստած խալիֆին: Գյուղացին թերթեր չէր կարդում, արտաքին աշխարհի հետ կապ չունենալու հետևանքով ծանոթ չէր Մուսաֆա Քեմալին: Ահմեդ Ջելալը գյուղով անցնող քեմալական զինվորների մասին պատմում էր, որ «նրանք բանակի սպայից առավել են, նրանք կրոնական ուսմունքի առաջնորդների պես են»: Այն տպավորությունն է ստեղծվում, որ Ահմեդ Ջելալն ինքն էլ մի քեմալական զինվոր էր: Վեպի անմիջապես կեսից պատերազմի հետ կապված լուրերը, խոսակցությունները և իրադարձություններն առաջին պլան են մղվում, և դրան զուգահեռ Ահմեդ Ջելալի է գյուղացիների միջև հարաբերությունները որակապես փոփոխության են ենթարկվում: Գյուղացիները, նրան թշնամի կարծելով, ցանկանում էին հաշվեհարդար տեսնել: Սակայն «Հիսուսն իրեն խաչողներին

¹⁷ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, s. 53.

ներում էր, քանի որ նրանք չգիտեին, թե ինչ էին անում՝ Աստածաշնչյան այս դրույթը Ահմեդը դարձրել է գյուղացիների հետ շփման իր կարգախոսը¹⁸:

Ահմեդ Ձելալը գյուղ է գալիս «ոչ միայն թշնամու հալածանքներից», այլև «իր տառապանքներից» պաշտպանվելու համար¹⁹: Նա ինչպես գյուղ գալուց առաջ, այնպես էլ հետո, իր մեջ միշտ մի նեղություն, մի աննկարագրելի անհանգստություն է կրում: Գյուղ գալով՝ սկսում է մտածել, թե «ինչ-որ թանկագին բանից է կտրվել», սակայն միևնույն ժամանակ երևում է, որ «ետևում ոչինչ և ոչ մեկին» էլ չի թողել²⁰: Իսկ թե ինչ է թողել ետևում՝ մայր կամ սիրած էակ, այդ առնչությամբ ոչինչ չի ասում և հեղինակն էլ որևէ հուշում չի տալիս ընթերցողին հասկանալու համար, թե որևէ գոյություն չունեցող այդ «թանկ բանը»: Վեպում տեսնում ենք մի Ահմեդ Ձելալի, ով իրեն ներկայացնում է որպես ամեն ինչը կորցրած և մեծ ցավ ապրող մի մարդու: Ահմեդ Ձելալի՝ «Զգում եմ ինձ այնպես, կարծես ողջ-ողջ թաղված լինեմ գերեզմանոցում»²¹ խոսքերից հասկացվում է, որ նա կորցրել է ապրելու ցանկությունը: Նոր կյանք ստեղծելու նպատակով բոլորովին անծանոթ մի գյուղ գնալը նա նույնացնում է «ողջ-ողջ թաղվելու» հետ: «Երեսուներեք տարվա ավիրված գոյությունը այլևս անդառնալի համարվող չհամոզված երջանկություն է թվում: «Դեռ երեսունհինգս չբոլորած, ամեն ինչ վերջացած է, գործն ավարտված է: Պետք է խոստովանենք, որ սերը, ցանկությունը, կիրքն ու հույսն այդիս կորած են ու հանգած, պետք է խոստովանենք՝ փակ են երջանկության և հաջողության դռները: Իսկ այստեղ գալով՝ դատապարտված եմ ծառի պես աստիճանաբար չորանալուն»: Երբ գյուղն անցնում է հույն զինվորների ձեռքը, Ահմեդը կալանավորվում է և հրա մոտ դարձյալ զլուխ է բարձրացնում մահվան մասին երևակայությունը: Չապրելու կամ էլ ողջ-ողջ թաղվելու զգացումը նոր պատկերացմամբ է ներկայացվում: «Խնդրե՛ք Ահմեդ Ձելալը մահացավ և նրան հերեզմանոցում դժոխքի հրեշտակներն են սպասում: Որովհետև

¹⁸ Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 44:

¹⁹ Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, 1990, էջ 44:

²⁰ Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 41:

²¹ Yakup Kadri Karaosmanoglu, *Yaban*, էջ 35:

այս երկրի վրա ապրել է ինչպես քավարանում»²²։ Ահմեդը չէր կարողանում կողմնորոշվել՝ արժանի է ապրելու, թե՛ մեռնելու։ Ինչպես Յաքուփ Քադրիի գրեթե բոլոր տղամարդ կերպարները, այնպես էլ Ահմեդ Ջելալն իրեն զգում է «չմեծացած երեխայի պես», ինչն էլ բացատրում է Մեհմեդ Ալիի պաշտպանության տակ գտնվելու նրա մղումը։ «Ես ծաղրածու չեմ, սակայն, անկասկած, միամիտ և մեծ երեխա եմ»²³։ «Մեծ երեխա» պատկերացումը, ինչպես մյուս վեպերում, այնպես էլ այստեղ, ամբողջականացվում է անպաշտպան աշխարհում անպաշտպան մարդու վիճակի հետ։ Իր հերոսի անպաշտպանվածությունն ու հեշտությամբ վնասվելու եռգեփճակը բացատրելու համար հեղինակը դիմում է մեկ այլ պատկերի։ Ահմեդն իրեն նույնականացնում է պոչը կտրած շան հետ։ Երբ գյուղ են գալիս թուրքական բանակի սպաները, Ահմեդ Ջելալը մի պահ ցանկանում է գնալ նրանց հետ, սակայն հրաժարվում է այդ մտքից՝ իրեն հաշմանդամ և խեղճ զգալու պատճառով։ Այստեղ նա հիշում է՝ դեռևս պատերազմի տարիներին ռազմաճակատում իրեն հանդիպած անպոչ շանը։ Նա մտածում է, որ եթե սպաների հետ գնա, կնմանվի հենց այդ շանը, և սպաները նրան «խեղանդամ կենդանու պես» կթաքցնեն թիկունքում²⁴։ Այստեղ տեսնում ենք, որ Ահմեդ Ջելալի աջ ձեռքի կորուստը նրա համար ավելին է, քան ֆիզիկական արատը։ Այդ պատճառով ավելի ճիշտ կլինի մտածել, որ Ահմեդի՝ Քավարանում լինելն ու ապրել չկարողանալու հոգեփճակներն ասոցացվում են նրա հոգեբանական անլիարժեքության բարդույթի հետ։

Գլխավոր հերոսի էությունն անողոր է ինչպես շրջապատի մարդկանց, այնպես էլ իր նկատմամբ։ Ինչ բնորոշումներ օգտագործում է գյուղացիների համար, չի զլանում նույնպիսի անականներ օգտագործել նաև իր համար։ Ահմեդ Ջելալի՝ քեմալական շարժման գաղափարների և էմինեի հետ կապված իդեալականացված պատկերացումներից բացի՝ վեպում հնարավոր չէ հանդիպել գեթ մեկ տեսարանի, որտեղ գլխավոր հերոսը կյանքին նայում էր դրական հայացքով։

²² Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 124, 191:

²³ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 123:

²⁴ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 159-160:

Հեղինակը վեպում հստակ ցույց է տվել նաև թուրք գյուղացու և մտավորականի միջև եղած լեզվական, համոզմունքների և աշխարհընկալման տարբերությունների խորը անդունդը: Նա զարգացնում է այն միտքը, որ թուրք մտավորականն էլ իր հերթին չէր ճանաչում թուրք գյուղացուն, չգիտեր նրա կենսական և հոգեբանական ծանր խնդիրները: Գյուղացին մաքառելով սնունդ է հայթայթում, զուրկ է բժշկությունից, մաքուր խմելու ջրից, ուսուցչությունից, երկրագործության համար հողերն անտեր են մնացել, չկա անասնաբուժություն, չկան ճանապարհներ, էլեկտրականություն: Գյուղացու այդ վիճակի համար կրկին Քադրին մեղադրում է քաղաքաբնակին: Հետամանացությունը կարծես գյուղացու համար դարձել էր նորմալ կենսակերպ, գյուղում դպրոցների բացակայության պատճառով գյուղացիները գրեկարդալ չէին իմանում: Ահա այսպիսի պատկերները Քադրին իր վեպում մերթ ընդ մերթ առաջին պլան է մղում:

Ճաքճած շուրթերով, արևից աքլված երկար դեմքերով, խամրած մազերով գյուղացին պատերազմի հանդեպ ոխով և զզվանքով էր լցված: Որպես սոցիալական և գաղափարական առաջընթացի արդյունք՝ վեպի վերջում գյուղացիները կամաց-կամաց սկսում են կախալ զգալ երկրի հանդեպ: Այս դրույթով հեղինակը վարձում է թուրք գյուղացու մեջ արմատավորել «հայրենիքի», «սեփական երկրի» գաղափարը, արթնացնել հայրենասիրության զգացումը՝ շատ լավ հասականալով, որ այդ երկրի բնիկ տերերը կամ բնաջնջված էին, կամ արտաքսված, կամ էլ բռնի իսլամացված:

Վեպում եաճախ Քադրիի կիրառած գեղարվեստական մեթոդները կարծես հիշեցնում են բալզակյան մեթոդներին, գրականության մեջ արմատացած ռեալիստական և նատուրալիստական մոտեցումներին: Նրա մոտ այնքան է խորանում նատուրալիզմը, որ գյուղացուն հետեյալ կերպ է բնութագրում. «Գյուղացիները վարում էին համարյա անասունի կենսակերպ, խղճուկ գոյությունը նրանց դարձրել էր բարոյապես այլանդակ: Նրանք հյուծված, տառապալիք եղած, ֆիզիկապես ոչ լիարժեք էակներ են, նրանց այդպես է դարձրել ծանր աշխատանքը, դաժան բնությունը»²⁵:

²⁵ Литература Востока в новейшее время (1917-1945), изд. Московского Университета, 1977, с. 93.

Որպես հեղինակի հնարանքի ինքնատիպություն՝ նշենք, որ վեպում որոշ կերպարներ համեմատվում են կենդանիների հետ: Այդ շրջանի թուրքական այլ վեպերում նման զուգահեռներն այդչափ վառ չեն դրսևորված: «Գյուղի բնակիչներից ամեն մեկն իր բնում պատսպարված կուղբ է»: Հեղինակը փորձում է հայտնաբերել, թե ինչն է ստիպում այդ գյուղացիներին ապրել զուտ կենդանական բնագոյներով: Վեպում կա կենդանիների շատ նմանեցված երկու կերպար՝ Էմինեի ամուսինը՝ Իսմայիլը և խորամանկ Սալիի աղան: Հմտորեն օգտագործվել են նաև բույսերը, հատկապես բույսերի երկու տեսակ: Գյուղացիների չորությունը, անպետքությունը, փտածությունը նկարագրելիս հեղինակը սկսում է զուգահեռներ անցկացնել նրանց և հոտած բույսերի միջև: Իսկ դրան հակառակ՝ կահ նաև կյանքի գեղեցկությունն ու աշխուժությունը խորհրդանշող բույսեր՝ օրինակ՝ Էմինեի կերպարը նունացնում է գեղեցիկ բույսերի հետ:

Վեպի գլխավոր հերոսի ինքնությունը համակողմանիորեն ընկալելու համար կվարձենք հրա կերպարը դիտարկել նաև կին-տղամարդ փոխհարաբերությունների ծիրում: Նշենք, որ կնոջ խնդիրը թուրքական հասարակության մեջ նորովի մեկնաբանություն ստացավ քեմալականների օրոք հրապարակախոսության, և հատկապես, գեղարվեստական գրականության մեջ: Ուստի պատահական չէ որ Քադրիի «Օտարը» վեպում ծանրակշիռ տեղ են զբաղեցնում Ահմեդ Ջելալի՝ կանանց հանդեպ ունեցած ընկալումները, որոնց վերլուծությունը թույլ է տալիս հանգելու այն եզրակացությանը, որ չնայած Թուրքիայում կնոջ նկատմամբ որոշակի ազատամտական գաղափարների տարածման, այնուամենայնիվ, կինը Քադրիի «Օտարը» վեպում դիտարկվում է «ինքնություն և դեմք չունեցող արարած», որին անգամ կին անվանել չէր կարելի:

«Օտարը» վեպում Ահմեդ Ջելալի աշխարհի ու շրջապատի ե կանանց ընկալման ձևերը միմյանցից տարբեր չեն: Նրա կողմից կատարվող նմանություններն ու համեմատությունները հիմնականում բացասական ուղղվածություն ունեն: Ինչքան էլ Ահմեդ

Ջելալը գյուղացի կանանց տարաեջատի Ստամբուլի կանանցից²⁶, նրա երևակայության մեջ կնոջ պատկերը ներկայանում է որպես մի կերպար, որից «պետք է խուսափել»: Վեպի սկզբում գրողն ու նրա շրջակայքն ուսումնասիրող Ահմեդ Ջելալի հայացքը այնուամենայնիվ ընկնում է նաև կանանց վրա: «Այստեղ գալուցս ի վեր՝ կին կամ աղջիկ կոչվող որևէ արարած չեմ տեսել»²⁷: Հետաքրքիր է այն, որ Ահմեդը, գյուղում չհանդիպելով իր պատկերացրած կանանց, նրանց հեզևական երանգով անվանում է արարածի մի տնսակ՝ նրանց դուրս թողնելով մարդ կատն-գորիայից: Զինվորական հանձնակատար Մեհմեդ Ալիի հարսանիքի ժամանակ հանկարծ Ահմեդ Ջելալը կանանց մեջ բացասական հատկանիշների կողքին սկսում է տեսնել նաև մի փոքր դրականը. «Նրանց մեծ մասը տձև է, կարճահասակ, գնդաձև, սովորականից խոշորամարմին, և, այնուամենայնիվ, ունի հաճելի փափկություն»²⁸: Սակայն Ահմեդ Ջելալն ինչքան էլ փորձեր նրանցում գտնել որևէ հրապուրիչ բան, նրանց հետ մերձենալու մտքից տհաճություն էր զգում²⁹:

Թեև գյաղը վարձում է ցույց տալ այլ ննթատեքստ, սակայն իրենից անկախ հեղինակը բացահայտել է թուրքի բնագոյային-անասնական, արհամարական վերաբերմունքը կնոջ նկատմամբ, ինչի ապացույցն են նրա կոպիտ, գոեհիկ բնորոշումները, սիրա ընկալումներն ու մնկնաբանությունները: Շուտով պարզվում է, որ Ահմեդ Ջելալը որոշակի «զգացմունք» է տածում հանձնակատար Մեհմեդ Ալիի եղբոր՝ Բսմայիլի կնոջ՝ Էմինեի նկատմամբ: Սակայն դա ավելի շատ կիրք էր, քան սիրո զգացմունք: Նա վեպի հնագանդ հերոսներից մեկն է: Էմինեի կերպարում Քադրին փորձել է մարմնավորել հասարակ թուրք աղջկան: Ահմեդ Ջելալին սիրելով՝ նա ամուսնանում է Մեհմեդ Ալիի եղբոր՝ Բսմայիլի հետ: Բսկ դրա պատճառը հեղինակը բացատրում է, որ նա էլ իր համագյուղացիների նման Ահմեդին ընկալում էր որպես օտարական: Վերջում այլևս չդիմանալով գյուղական անմարդկային պայմաններին՝ հունական միացյալ ուժերի մուտք գործելուց հետո Էմինեն

²⁶ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, s. 229.

²⁷ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, 2008, s. 34-35.

²⁸ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 53.

²⁹ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 54.

համաձայնվում է փախչել Ահմեդ Ջելալի հետ: Այստեղ էմինեն նաև
 հանդես է գալիս որպես հանուն սիրո ինքնագոհության գնացող մի
 կերպար, որ անգամ պատրաստ էր լքել իր ընտանիքը: Փախուստի
 ժամանակ էմինեն և Ահմեդ Ջելալը ծանր վիրավորվում են:
 Փախչելով գյուղից՝ նրանք, քանի որ վիրավոր էին, թաքնվում են
 մոտակա գերեզմանոցում: Էմինեն մշակում է Ահմեդի վերքը, և
 այդպիսով իրականանում է Ահմեդի երազանքը՝ մարմնական
 հպումը. «Ճիշտ է՝ այդ ձեռքերը մարմնիս վրա հենց այնպես
 թափառում էին: Ճիշտ է՝ դրանք ստամբուլցի տիկնոջ ձեռքերի պես
 ճերմակ ու փափակ չէին, ոչ էլ շուշանի հոտով էին բուրում:
 Մակայն արյունով ներկված այս հողի վրա դեպի ինձ ձգված այդ
 կոշտ ու անվարժ ձեռքերը մահվան և կյանքի միջև պայքայի
 պահին ինձ մոռանալ տվեցին իմ բոլոր ցավերը, տենդից տանջվող
 մարմնիս պատճառեցին վերերկրյա հաճույք»³⁰: Նրա և Էմինեի հետ
 հարաբերությունները հիմնված են երևակայության վրա, միայն
 վեպի վերջին հատվածում է Ահմեդը կարողանում է հավել: Նրան,
 որից հետո միմյանցից բաժանվում են ընդմիջտ: Մակայն Էմինեին
 թողնում է մոտակա մի գյուղում՝ պան տալով նրա մոտ իր
 հուշատետրը: Էմինեն նաշտվում է իր ճակատագրի հետ, իսկ
 Ահմեդը միայնակ շարունակում է իր ուղին և անծանոթ
 ճանապարհով հեռանում դեպի մշուշոտ ապագան: Վեպում
 տեսնում ենք, որ նրբ հունական բառակազմերը և արտահայտումն
 է ողջ գյուղը, գերեզմանում գյուղացիներին և վիրավորյում Էմինեին
 ու Ահմեդ Ջելալին, վերջինս չի գործում այնպես, ինչպես կգործեր
 «հայրենասիրության, ազգասիրության կրակով տոգորված»
 այսպես կոչված քեմալական մտավորականը: Այն պահին, երբ
 օտար ռազմածր մտել էր գյուղ, Ահմեդ Ջելալը փախչելու ծրագիր է
 մշակում: Այստեղ բացահատվում հրա իսկական քաղքենիական և
 եսասիրական էությունը: Երբեմն նրա կերպարը նաև հիշեցնում է
 րոպե առաջ իր սիրեցյալին հասնելու մասին մտածող աշուղի. Թող
 այս մոլորված, մերկ և անճար ամբոխը սովից գալարվելով
 մահանա: Ես ոչ ուտելու, ոչ էլ խմելու կարիք ունեմ: Երեկոյան
 մութն ընկնելուն պես կվերցնեմ Էմինեին և կգնամ»³¹: Երբ Էմինեն

³⁰ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 229:

³¹ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 233:

սկում է անհանգստանալ Ահմեդ Ջելալի վերքի համար, և երբ ավելի ուշ Ահմեդ Ջելալը նրա ծնկների վրա հանգստություն է գտնում, այդ ամենը նրան մոռանալ են տալիս իր վատ հուշերը: Նույնիսկ երագում³² Հմինեի կողքին, Ահմեդը, մի կողմ թողնելով վեպի առանցքը կազմող մտավորական-գյուղացի հակադրությունը, որոշ իմաստով մտովի մտավորականին հաշտեցնում է գյուղացու հետ. «Երագում տեսա, որ թուրք գյուղացու է թուրք մտավորականի միջև տեղի վեճից հետք անգամ չի մնացել: Հմինեի՝ ծառի ճյուղեր հիշեցնող թերևս առողջ է ամուր կապ դարձան իմ է այդ թշնամանքի ու անտարբերության միջև: Գյուղում անցկացրած երկու-երեք տարիների ընթացքում ինձ դժխային ցավ պատճառած ողջ աստելությունը, ցասումը, ըմբոստությունը, դժբախտությունն ինձնից դուրս են գալիս իմ աջ կողքի վերքից հոսող արյան հետ: Կարծես պայթել է և դուրս է ժայթքում իմ ներսում բորբոքված թարախապալարը... Ինչպիսի հանգստություն, ինչպիսի հանգստություն եմ զգում...»³²:

Թուրք գրականագետ Ֆ. Նաջին «Օտարը» խորագրով իր հոդվածում վեպի այդ վերջին հատվածը հեզանքով այսպես է ներկայացնում. «Ահմեդ Ջելալը, ով ընդամենը որոշ ժամանակ առաջ սուրը ձեռքին հանուն քննալական գաղափարների գյուղում մեռել էր ցանկանում, բախտի քնահաճույքին է թողնում ձախ ազդրից վիրավորված Հմինեին, ում ձեռքի մի հպումից մոռանում էր իր ցավերը, ում կողքին երագում տեսել էր, թե իբր «թուրք գյուղացու և թուրք մտավորականի միջև տեղի վեճից հետք անգամ չի մնացել»³³: Ահմեդը հաճախ համեմատություններ էր անցկացնում Հմինեի և Ատամբուլի կանանց միջև: Վերջիններս նրան հիշեցնում են մաքրություն, նրբություն ու շուշանի բույր: Մյուս կողմից Ատամբուլի կանանց մասին արված այդ արտահայտությունները երբեմն հակառակ երանգ են ստանում: Նա, նշելով, որ կանանց մասին պատկերացում է կազմել «իր դառը անձնական փորձից», ասում է, որ սերը «բաղկացած է անհատական սեռական ճգնաժամերից»³⁴ և սերը նմանեցնում է ընդամենը «զուգավորման շրջանում ճգնաժամեր ապրող կենդանիների»

³² Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 230:

³³ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 109:

³⁴ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, էջ 65-66:

վիճակին: Ահմեդ Ջելալը, «կնոջը» բնութագրում է «անմարդկային», «մահաբեր» վիրավորական արտահայտություններով: Նրանց համար գործածում է «վայրի կատու», «թունավոր օձ» արտահայտությունները՝ էլ ավելի ընդգծելով կանանց հանդեպ իր ունեցած թերաբժեքության բարդություն ու տաճած թշնամանքը: Ահմեդի համար չկար հոգեկան կապ հասկացությունը, նրա մեջ խոսում էր կիրքը և ոչ թե իսկական սիրո զգացումը: Նրա՝ յուրովի սիրո ընկալումները մեկ անգամ էս հաստատում են, որ անգամ քաղաքային թուրք մտավորականի էության մեջ շարունակում էր ապրել իր նախնիներից ժառանգած քոչվորահրոսակային էությունը: Թեև վեպում խոսքը գնում է թուրք կնոջ մասին, սակայն թուրքական բարբարոս վերաբերմունքը հատկապես ոչ թուրք կանանց նկատմամբ բազմաթիվ փաստերով է հաստատված: Փաստորեն, թուրքն իր իսկական էությունից չէր ազատագրվել:

Քաղրիի «Օտարը» վեպը հենց թուրք հասարակության մեջ արժանացել է հակասական գնահատականների: Նրանց մի մասի կարծիքով այն իրենից գրական ոչ մի արժեք չի ներկայացնում: Այն ուղղակի ռեալիստական արվեստի ըմբռնման տեր գրողի իրականության մեկնաբանումն է³⁵, և ավելի շատ ունի քարոզչական բնույթ ու նպատակ: Ժամանակակից հայտնի թուրք գրող Ռեշատ Նուրի Գյունեթքինի գնահատմամբ՝ Քաղրիի այս վեպն արվեստի կանոնների տեսակետից գրված է շատ անփութ³⁶: Բ. Մորանը կարծում է, որ Ռեշատ Նուրի Գյունեթքինի այս պնդումը սխալ է և «Օտար»-ում իրադարձությունների հետևում պարզ կերպով ներկայացվում են քեմալական պայքարի իրական ընթացքն ու զարգացումները: Նա նաև փորձում է բացել Քաղրիի վեր հանած խնդրի ենթախորքը. վեպում գյուղացու և մտավորականի միջև անդունդի խորացումը: Ըստ Բ. Մորանի՝ այս իրողությունը կապված է քեմալական շարժման նկատմամբ թուրք հասարակության այդ երկու խավերի դրսևորած դիրքորոշմամբ: Պատումի սկզբում Ահմեդ Ջելալը պարզապես մի օտարական էր, բայց լինելով քեմալիզմի ջատագով՝ նրա նկատմամբ թշնամական վերաբերմունքն առավել սուր բնույթ ստացավ, մեծացավ

³⁵ Akı Niyazi, *Yakup Kadri Karaosmanoğlu: İnsan-Eser-Fikir-Üslup*. İstanbul: İletişim, 2001, s. 255.

³⁶ Moran Berna, *Yaban'da Teknik ve İdeoloji: Türk Romanına Eleştirel Bir Bakış* 1, էջ 153-66:

թշնամիների թիվը, խորացավ լարվածությունը և նասավ իր զագաթնակետին: «Օտարը» վեպում գործող անձինք, վարքագծերը և զգացմունքներն ամբողջությամբ տգեղ են և նողկալի: Գյուղացիների մեջ ուրախ մարդկանց, լավ և արժանավայել վերաբերմունքի չենք կարող հանդիպել, ինչպես նաև՝ մաքուր ընկերության և երջանիկ սիրո: Գյուղում չենք կարող գտնել մեկին, ով տգեղ ու կեղտոտ չէ և կամ վրայից վատ հոտ չի գալիս³⁷:

«Քաղրո» ամսագրի հրատարակիչ-գրողները եշում են, որ «Օտարը» ռեալիզմի նախնական է՝ ընդգծելով, որ այն դրեց ազգային գրականության հիմքը³⁸: Վեպի առնչությամբ՝ այլ թուրք գրականագետներ Նիհադ Սամի Բահարյըն, Իսմաիլ Հաբիբ Մևուքը և Բուրհան Ումիթ Թոփրաքը ես այն կարծիքն են հայտնել, որ «Օտարը» միակողմանի և հոռետեսական ստեղծագործություն է³⁹: Վեպում գյուղացու հակասական բնութագրի վերաբերյալ գրքի ներկրորդ հրատարակության նախաբանում պարզաբանումներ է տալիս իննց ինքը Յաքուփ Քաղրին. «*Պրա պատճառը կրկին դու ես, թուրք մտավորական: Դու այս ավերված և ընչազուրկ մարդկանց համար ի՜նչ ես արել: Տարիներով, հազարամյակներով դու ծծում ես նրա արյունը և նրան նետել ես անպետք, կարծր հողի վրա և այժմ քեզ իրավունք ես վերապահում զալ և նրանից խորշել*»: Թուրք բնակչությունը ոգի ունի: Բայց չի կարողանում ազդեցություն գործել: Մի գլուխ ունի, բայց չի կարողանում այն լուսավորել: Մի մարմին ունի, բայց չի կարողանում այն սնել: Հողի վրա է ապրում, որը չի կարողանում մշակել: Դու նրան թողել ես կենդանական բնագոյների, տգիտության, աղքատության և կարիքի մեջ: Նա կարծես մի մոլախոտ է աճում մոխրագույն հողի կրծքին: Հիմա ձեռքիդ մանգաղն առած եկել ես ի՜նչ հնձես: Ի՜նչ ազան ես: Եկել ես այս եղի նջը հնձես, այս փշե՛րը: Բհարկե, եթե ոտքերդ մխրձես ամեն կողմից արյուն կգա, և ցավից դեմքդ կծուվի: Զայրույթից բռունցքներդ կսեղմես: Քեզ այդքան տառապանք պատճառածը հենց քո ձեռքի ստեղծածն է, քո արարածը»⁴⁰:

³⁷ Moran Berna, "Yaban'da Teknik ve İdeoloji", էջ 159:

³⁸ Atilla Özkırımlı, *Türk Edebiyatında Yaban*, 1990, էջ 237-240:

³⁹ Atilla Özkırımlı, *Türk Edebiyatında Yaban*, 1990, էջ 237-240:

⁴⁰ Yakup Kadri Karaosmanoğlu, *Yaban*, İletişim Yayınları, 1970, s. 6-7. Yakup Kadri Karaosmanoğlu, *Bütün Eserleri Dizisi 1*, İstanbul, İletişim Yayınları, 2001, s. 10-11.

Այս ամենի կողքին Քաղրին վեպում կարմիր թելի նման նաև այն միտքն է առաջ քաշում, որ գյուղացին կարող է զարգանալ ու վերափոխել միայն հզոր պետության և նոր մտավորականության հսկողության պարագայում:

Ամփոփելով՝ նշենք, որ «Օտարը» ինչպես Յակովի Քաղրիի վեպերի շարքում, այնպես էլ թուրք գրականության պատմության մեջ ունի իր կարևոր տեղն ու դերը: Հատկանշական է, երբ որ խոսվում է մտավորական-ժողովուրդ անջրպետի մասին անմիջապես հիշվում է Քաղրիի այս ստեղծագործությունը: Սկզբնական շրջանում Թուրքայում այս վեպն ընդունվում է մեծ ոգևորությամբ, քանի որ նրանում պաշտպանվում էր քեմալական գաղափարներն ու շարժումը: Բայց որոշ ժամանակ անց առաջ է քաշվում այն վարկածը, որ Քաղրիի՝ թուրք գյուղացու մասին բերված փաստարկներն իրականության աղճատումն են: Մակայն տասը տարի հետո հերքվում է և 1942 ժՀԿ-ն վեպն արժանացնում է պետական մրցանակի: «Օտարը» վեպը Քաղրիի գյուղական ուղղվածությամբ միակ ստեղծագործությունն է, և արվեստագետի կայացման շղթայի կարևոր օղակներից է: Այն համարվում է Թուրքիայի վերջին յոթանասուն տարիների ընթացքում գրված խոշորագույն ստեղծագործություններից մեկը: Այն վերահրատարակվել է ավելի քան 23 անգամ և համարվում է թուրք գրականության առաջին ռեալիստական ստեղծագործությունը: Վեպը թարգմանվել է գերմաներեն և իտալերեն: